ԱՆՎԱՆԻ ՀԱՅԱԳԵՏԸ

(ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Բաբկեն Հարությունյանի
ծննդյան 70-ամյակի առթիվ)

Անվանի գիտնական, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ գիտության վաստակավոր գործիչ, Երևանի պետական համալսարանի հայոց պատմության ամբիոնի վարիչ, ԵՊՀ Հայաստանի պատմական աշխարհագրության և քարտեզագրության լաբորատորիայի գիտական ղեկավար Բաբկեն Հարությունի Հարությունյանը բոլորեց ծննդյան 70 և գիտամանկավարժական արդյունաշատ գործունեության 45-ամյակը:



Բ. Հարությունյանը ծնվել է վանեցիների ավանդապահ և ուսումնասեր ընտանիքում՝ Երևանում, 1941 թ. մարտի 4-ին: 1958 թ. Երևանի Հր. Ամառյանի անվան թիվ 72 միջնակարգ դպրոցը ոսկե մեդալով ավարտելուց հետո նույն տարում ընդունվել է պետհամալսարանի պատմության ֆակուլտետը, որն ավարտել է ժամկետից շուտ՝ 1962 թ.՝ գերազանցության դիպլոմով: 1963–1966 թթ. ուսանել է նույն բուհի ասպիրանտուրայում, 1968 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն՝ □Վայոց ձորը հնագույն ժամանակներից մինչև 1045 թ. (պատմա-աշխարհագրական ուսումնասիրություն)□ խորագրով: Գիտամանկավարժական գործունեությանը զուգահեռ՝ 1972–1977 թթ. սովորել է և գերազանցությամբ ավարտել ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետը: Տարիների գիտահետազոտական տքնաջան պրպտումների արգասիք «Մեծ Հայքի վարչաքաղաքական բաժանման համակարգն ըստ «Աշխարհացոյց»-ի (արևմտյան և հարավային աշխարհներ)» դոկտորական ատենախոսությունը պաշտպանել է 1993 թ.:

Պատմաբան Բ. Հարությունյանին բնորոշ է ինչպես թեմատիկ, այնպես էլ ժամանակագրական առումով գիտական հետաքրքրությունների ընդգրկուն շրջանակը: Դրա հիմքում ընկած են պատմաաշխարհագրական նախանձելի գիտելիքները, աղբյուրագիտական ու լեզվագիտական բարձր պատրաստությունը, սուր հիշողությունը և հետազոտական ու վերլուծական անուրանալի ձիրքը: Միայն զարմանալ կարելի է, թե ինչպես է Բ. Հարությունյանին հաջողվում նախորդ հետազոտողների կողմից անտեսված կամ նկատված անգամ աննշան փաստական նյութը խոսեցնել՝ կատարելով ուշագրավ իրապատում եզրահանգումներ: Գիտական անաչառությունը և մեր տարածաշրջանի պատմության քաջ իմացությունը Բ. Հարությունյանին զերծ են պահում իսկական գիտնականին խորթ զավառական

հայրենասիրությունից, ինչը նրա կարևոր առավելությունն է: Բ. Հարությունյանն ավելի քան 500 աշխատությունների (մենագրություններ, հոդվածներ, քարտեզներ, զեկուցումների թեզիսներ, գրախոսություններ) հեղինակ է: Դրանք նվիրված են հայոց, ինչպես նաև տարածաշրջանի առավելապես հին և միջնադարյան պատմության ու պատմական աշխարհագրության տարաբնույթ հիմնահարցերին: Բ. Հարությունյանը հիմնահարցերը դիտարկել է նոր լույսով՝ դրանով իսկ իր ավանդը ներդնելով հայ պատմագիտության գանձարանում:

Գիտահետազոտական գործունեության սկզբնական փուլում Բ. Հարությունյանը մեծ ուշադրություն է դարձրել Վայոց Ձորի և Սյունիքի պատմության քննությանը՝ կատարելով պատմաաշխարհագրական, ժամանակագրական և տեղանվանական բնույթի զգալի ու արժեքավոր ճշգրտում-սրբագրումներ: Հետագայում գիտնականն ընդլայնել է իր գիտահետազոտական աշխատանքների շրջանակը: Վաղ միջնադարյան երկու կարևոր վավերագրերի՝ «Գահնամակի» ու «Ձորանամակի» հյուսկեն քննությամբ նա ցույց է տվել, որ դրանցից առաջինը ստեղծվել է ոչ թե Սահակ Պարթևի, ինչպես մինչ այդ ընդունված էր, այլ՝ Խոսրով Գ-ի կողմից՝ խնդիր ունենալով իրավապես ամրագրել 388 թ. վերամիավորված Մեծ Հայքի թագավորության տարածքային ամբողջականությունը: «Ձորանամակի» նորովի քննությունը Բ. Հարությունյանին թույլ է տվել ճշտելու հայոց արքունի ու նախարարական զինուժի հարաբերակցությունը, մարդպետական ու մաղխազական գնդերի ռազմուժը և Վիրքն ու Աղվանքը ռազմակալող զորքերի զինուժը: Հայ ժողովրդի կազմավորման հարցը եղել և մնում է գիտնականների ուշադրության կենտրոնում: Անդրադառնալով այդ խնդրին՝ նա հանգել է այն տեսակետին, որ մեր ժողովրդի կազմավորման համար թթխմորի դեր է կատարել Թորգոմի (Թոգարմա) տեղաբնիկ ցեղախումբը: Անդրադառնալով Հայաստանի և տարածաշրջանի մյուս երկրների մ. թ. ա. VII–VI դդ. պատմությանը՝ Բ. Հարությունյանը քննել է հայոց հետ սկյութների, մուշկերի, մարերի ու պարսիկների հարաբերություններին և մասնավորապես կարծիք է հայտնել, որ Հայաստանի տարածքն ամբողջությամբ ընդգրկվել է Աքեմենյան Պարսկաստանի ոչ թե XIII և XVIII սատրապությունների մեջ, ինչպես մինչ այդ ընդունված էր, այլ միայն XIII-ում: Իր բազմաքանակ աշխատությունների մեջ գիտնականը նորովի է քննել Արշակունյաց և վաղմարզպանական Հայաստանի վարչաքաղաքական կացությանն ու կառուցվածքին, նախարարության հաստատությանը, արքունի գործակալություններին, հայ եկեղեցու թեմական բաժանմանը նվիրված և այլ հարցեր: Արդյունքում շատ ընդունված դրույթներ կամ հիմնավոր փաստարկվել են, կամ էլ լուսաբանվել ու սրբագրվել արդի հայագիտությանը պատշաճ մակարդակով:

Հայ ժողովրդի հին ու միջնադարյան պատմության ուսումնասիրության բնագավառում լուրջ ներդրում են Բ. Հարությունյանի «Հայաստանի, հայ-իրանական հարաբերությունների և Առաջավոր Ասիայի հնագույն պատմության մի քանի խնդիրների շուրջ (Ք. ա. VII–VI դարեր)», «Աշխարհացույց»-ը և չորս Հայքերի խնդիրը», «Մեծ Հայքի վարչա-քաղաքական

բաժանման համակարգն ըստ «Աշխարհացույց»-ի (մասն Ա) մենագրություններն ու այլ ուսումնասիրություններ:

Բ. Հարությունյանը նպատակասլաց զբաղվում է պատմաաշխարհագրական խնդիրներով: Նրա հեղինակությամբ է լույս տեսել «Հայաստանի պատմության ատլաս»-ը: Դրանում տեղ գտած բազմաթիվ քարտեզներից մի քանի տասնյակը գետեղված են ինչպես Բ. Հարությունյանի խմբագրությամբ ու հեղինակցությամբ լույս տեսած, այնպես էլ դպրոցական այլ դասագրքերում: Նրա խմբագրությամբ ու հեղինակցությամբ է ստեղծվել կոթողային «Հայաստանի ազգային ատլաս»-ի Բ հատորը: Դրանում գետեղված պատմական քարտեզների գրեթե կեսի, առաջաբանի և քարտեզներին ուղեկցող նյութերի հեղինակը Բ. Հարությունյանն է: Նա նաև «Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն» եռալեզու ատլասի հեղինակներից է:

Այնուամենայնիվ, հոբելյարի գիտական պրպտումների առանցքը եղել է հայ պատմաաշխարհագրական մտքի հուշարձան «Աշխարհացույց»-ը: Դրա քննությունը գիտնականը կատարել է բազմալեզու աղբյուրագիտական հենքի վրա՝ վերահաստատելով այն տեսակետը, որ «Աշխարհացույց»-ը թվագրվում է V դարով և որ նրա հեղինակը Մովսես Խորենացին է: Ցույց է տվել, որ ըստ «աշխարհների» Մեծ Հայքի վարչական բաժանումը I դարի ծնունդ է, որ «Աշխարհացույց»-ն արտացոլում է Մեծ Հայքի վարչական բաժանումն ըստ III դ. աշխարհագրերի, իսկ մեզ հասած Մեծ Հայքի նկարագրության մեջ ըստ աշխարհների բաժանումը կրում է V դարի վարչական կացության ազդեցությունը: Բացի այդ, Բ. Հարությունյանը ճշտել է Տիգրանակերտի տեղադրությունը, Նփրկերտի հունարեն արձանագրության թվականը, Մեծ Հայքի թագավորության I–IV դդ. վարչատարածքային բաժանումներն ու վարչաքաղաքական բաժանման համակարգը և այլն: Բացահայտվել է Մեծ Հայքի վարչաքաղաքական համակարգի վրա ավատատիրական հարաբերությունների ու քաղաքական գործոնների ազդեցությունը:

Բ. Հարությունյանն իր գիտական գործունեության ընթացքում մշտապես ուշադրություն է դարձրել Թուրքիայում և Ադրբեջանում պետական մակարդակի վրա դրված՝ հայոց պատմության անհեթեթության աստիճանի հասնող կեղծարարության բացահայտմանն ու հակազդմանը:

Վերջին տարիներին գիտնականը շոշափելի ավանդ է ներդրել հայոց պատմությունը մատաղ սերնդին ճշմարտացի ու մատչելի հասցնելու գործում: Դա են վկայում նրա խմբագրությամբ ու հեղինակցությամբ լույս տեսած դպրոցական դասագրքերը:

Հոբելյարը նաև սիրված ու ճանաչված դասախոս է: 1969 թ. առ այսօր դասավանդում է մայր բուհում, իսկ 1993–1994 թթ. դասախոսել է նաև Համազգայինի Բեյրութի հայագիտական բարձրագույն հիմնարկում: Հայոց պատմության հանգուցային ու վիճահարույց հիմնախնդիրների շուրջ հաճախ է հանդես գալիս մամուլում և հեռուստատեսությամբ, միջազգային ու հանրապետական գիտաժողովներում: Նրա անմիջական ղեկավարությամբ գիտական աստիճաններ են ստացել ասպիրանտներ կամ հայցորդներ:

Բ. Հարությունյանը հաջողությամբ է զուգակցում գիտամանկավարժական, վարչական ու հասարակական գործունեությունը: Նա 1970–1971 թթ. եղել է ԵՊՀ արտասահմանյան ուսանողների աշխատանքների գծով դեկան, 1983–1985 թթ.՝ նույն բուհի կուսկոմիտեի քարտուղարի տեղակալ, 1985–1988 թթ.՝ «Երևանի համալսարան» հրատարակչության տնօրեն, 1993–2004 թթ.՝ ԵՊՀ պատմության ֆակուլտետի դեկան, համատեղությամբ՝ 1997–2000 թթ.՝ ԵՊՀ Հայաստանին հարակից երկրների պատմության ամբիոնի վարիչ: 2003 թ. նա ընտրվել է ԵՊՀ Հայոց պատմության ամբիոնի վարիչ և պաշտոնավարում է մինչ օրս, իսկ 2007–2008 թթ. համատեղությամբ վարել է ՀՀ - ԳԱԱ ակադեմիկոս քարտուղարի պաշտոնը: Տարիներ շարունակ նա ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում գործող գիտական աստիճաններ շնորհող խորհրդի փոխնախագահն է:

Բ. Հարությունյանն արժանացել է Երևանի պետական համալսարանի Ոսկե, նոբելյան մրցանակակիր «Ալբերտ Շվայցերի» մեդալների, «Եկատերինա Մեծ» և «Ոսկե արծիվ ոսկի թագով» գերմանական շքանշանների: 2006 թ. նրան շնորհվել է Մովսես Խորենացու մեդալ: Գիտնականի միջազգային ճանաչման վկայություններից են Ֆրանսիայի արտաքին գործերի նախարարության ու «Ֆուլբրայթ» հիմնադրամի թոշակներին արժանանալը, ինչպես նաև Բնության և հասարակության մասին գիտությունների միջազգային ակադեմիայի, EuropՊische Akademie der Naturwissenschafften *ակադեմիայի և «Արարատ» միջազգային ակադեմիայի անդամ լինելը:*

ԷԴԻԿ ՄԻՆԱՍՅԱՆ
ԱՐՏԱՇԵՍ ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ
ՊԵՏՐՈՍ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ